ոչնչանում էին: Ես հիմա եմ հասկանում վնասակար հետեւանքը մի այսպիսի սնահաւատութեան, որ մտցրել էին ժողովրդի մէջ վանքի աբեղաները: Հիւանդութիւններից շատերը փոխանցական լինելով, ուխտաւորները վարակւում էին եւ տարածում էին ժողովրդի մէջ: Այս էր պատճառը, որ երբեմն բոլորովին առողջ ուխտաւորը վերադառնում էր իր տունը ախտաւորած. նա համարում էր այդ մի պատիժ, որ տոեց նրան տիրամայրը, գուցէ իր մեղքերի համար...

Նոյնիսկ վանքի գիւղացիները, անդադար յարաբերութիւններ ունենալով հիւանդների հետ, վարակւում էին: Ոչ մի տեղ չէ կարելի տեսնել այնքան բորոտներ, մարմնով եւ դէմքով այլանդակած մարդիկ, որքան վանքի գիւղում: Մի քանի տեսակ հիւանդութիւններ դարձել էին նրանց մէջ ժառանգական, անցնում էին սերունդից սերունդ, որպէս էր հաշմանդամութիւնը:

Մովսէս առանձին օրէնքներ գրեց բորոտների եւ զանազան փոխանցական հիւանդութիւններ ունեցողների մասին: Եւ մինչեւ այսօր արեւելցիք իրանց բնակութիւնից դուրս են քշում նրանց: Բայց սուրբ տիրամօր «մղդսինէ ուրախ է լինում, երբ նրա կինը ծնում է մի զաւակ բոլորովին այլանդակած կերպարանքով, այլ խօսքով ասած, զարդարուած «տիրամօր նշաններովէ: Մի այսպիսի ցուցանքը բերում է հօր համար բաւականին արդիւնք: Նա դնում է իր որդին աւանակի վրայ, ման է ածում երկրից երկիր, ցոյց է տալիս աստուծոյ մօր սքանչելիքը, շարժում է մարդկանց մէջ երկիւղ եւ ջերմեռանդութիւն, — փող է հաւաքում...

Յիշեալ հիւանդութիւնները ունեցող թշուառները կոչւում էին «տիրամօր խեղճերէ: Դրանց ման ածելը ժողովրդի մէջ՝ սարսափ էր տարածում եւ աւելի էր շարժում տեսնողների հաւատքը դէպի վանքը, եւ հետեւապէս բազմացնում էր ուխտաւորների թիւը: Այս պատճառով վարդապետները ամենեւին չէին արգելում մղդսիների խաբէութիւնները, որովհետեւ նրանց հետ կապակից էին վանքի շահերը:

Հայերի մէջ անէծք է դարձել ասելը — «Տիրամօր եարան (խոցը) ընկնի քո վրան»: Եւ առանց սարսափելու ոչ ոք չէ յիշում Կորդոաց լեռների սուրբ Աստուածածինը...: Նա վրէժխնդիր է եւ խստասիրտ...

Ես էլ այն ժամանակ նոյն մոլորութեան մէջն էի, ես էլ տոգորուած էի նոյն սնահաւատութեան ախտով...: Ես էլ հաւատում էի այս բոլորին...: Բայց երբ կարդացի Հայոց Պատմութիւնը, այն ժամանակ հասկացայ, որ տիրամօր վանքի այս աւանդութիւնները եւ սովորութիւնները խիստ խորին կապ ունէին մեր պատմական անցեալի հետ, այն ժամանակների հետ, երբ Ներսէս մեծը Տիրանի որդի Արշակի օրերով Հայաստանում հիմնեց բազմաթիւ